# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014թվականի N 23

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի վեցերորդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014թվականի Նոյեմբերի 14-ի թիվ 7-րդ արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ԶՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ
6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ
7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 23 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

5.ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014թվականի N 24-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով,"Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՋԱՎԵՆ

3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ

4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների/ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1/մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում ՝ այգեգործական/ ամառանոցային/ տների ,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

2/սույն կետի "1-ին " ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման,վերականգման,արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման ,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի " 1-ին" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար "Տեղական տուրքերի և վճարների մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա."Տեղական տուրքերի և վճարների մասին" Հայաստանի Հանրապետությոն օրենքի իմաստով,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար "Տեղական տուրքերի և վճարների մասին " Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը;

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է ՝

1/ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝հինգ հազար դրամ.

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար ՝հինգ հազար դրամ.

5.Համայնքի տարածքում՝

1/բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.

2/ հեղուկ վառելիքի ,տեխնիկական հեղուկացված գազերի վաչառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ:

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները/սաունաները/,խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1/առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2/հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3/բաղնիքների /սաունաների/ համար ՝երկու հարյուր հազար դրամ.

4/խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5/շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ

6/վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է ՝

1/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝մեկ հազար դրամ.

2/թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդիհամար ՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3/այլ ատաքին գովազդի համար՝հինգ հարյուր դրամ.

4/դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ՝մեկ հազար դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ հինգ հազար դրամ:

11.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել մեկ հազար դրամ:

13.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել հինգ հազար դրամ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 07 արտահերթ նիստի 24-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի վարչական տարածքում 2015 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»թիվ 07 արտահերթ նիստի 24-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում,որ այն ուղղված է ապահովելու համայնքի տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տեղական տուրքերի և վճարների հավասար մատչելիությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014թվականի N 25-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 19-6-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության 56-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՋԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ

07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող,ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճար սահմանվում է `

1/համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար `հինգ հազար դրամ.

2/համայնքի բնակիչ համարվող անձանց` տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար` մեկ հազար դրամ.

3/համայնքի բնակիչ համարվող անձանց` աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար` մեկ հազար դրամ.

4/համայնքի բնակիչ համարվող անձանց` նպաստներ և կրթաթոշակներ,քաղաքացիների` բանկային ավանդներ և փոստային առաքումներ / այդ թվում դրամական և ծանրոցային/ստանալու լիազորագիր հաստատելու համար` մեկ հազար դրամ.

5/համայնքի բնակիչ համարվող անձանց տեղեկանք,բնութագիր և երաշխավորագիր տալու համար` մեկ հազար դրամ:

2.Համայնքի տարածքում համայնքի բնակիչ համարվող անձանց մատուցվող ծառայության` աղբահանության համար գանձվող ամսական վճարը սահմանվում է ` մեկ անձից` հիսուն դրամ:

3.Համայնքի ենթակայության մանկապարտեզում ծնողական վճար սահմանել մեկ երեխայի հաշվով ամսական 4000 հազար դրամ.

1/բնակչություն առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափով`

ա.մեկ ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկու և ավելի երեխանների համար՝ 75 տոկոսի չափով՝ 3000 դրամ.

բ.միակողմանի ծնողազուրկ երեխաների համար ՝ 50 տոկոսի չափով՝ 2000 դրամ.

գ.երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 25 տոկոսի չափով՝ 1000 դրամ.

դ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ,ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի Ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14- ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 07 արտահերթ նիստի 25-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 25-Ն ՈՐՈՇՄԱՆ*

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի կողմից 2015 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին»թրվ 07 արտահերթ նիստի 25-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում,որ այն ուղղված է ապահովելու համայնքի կենսական շահերը՝ համայնքի կառավարման սկզբունքներին ու օրենքով սահմանված լիազորություններին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014թվականի N 26-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղապետարանի և մշակույթի տան աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 և N2 հավելվածների:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

| Հ/Հ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
| 1. | 1 | Համայնքի ղեկավար | 220000 |
| 2. | 1 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 125000 |
| 3. | 1 | Աշխատակազմի քարտուղար | 140000 |
| 4. | 1 | Առաջատար մասնագետ | 135000 |
| 5. | 1 | I-ին կարգի մասնագետ | 75000 |
| 6. | 1 | I-ին կարգի մասնագետ | 75000 |
| 7. | 1 | II-րդ կարգի մասնագետ | 73000 |
| 8. | 1 | II-րդ կարգի մասնագետ | 73000 |
| 9. | 1 | Էլեկտրիկ | 73500 |
| 10. | 1 | Գործավար | 70822 |
| 11. | 1 | Հավաքարար | 66140 |

Բամբակաշատի գյուղապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ս.Մարտիրոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ N2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ

| Հ/Հ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
| 1. | 1 | Գրադարանի վարիչ | 66140 |
| 2. | 1 | Գրադարանավար | 66140 |
| 3. | 1 | Մշակույթի տան տնօրեն | 70822 |
| 4. | 1 | Պահակ | 73200 |
| 5. | 1 | Պահակ | 73200 |

Բամբակաշատի գյուղապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ ____ Ս.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2014թվականի N 27

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի թվով 25 /քսանհինգ/ սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն յուրաքանչյուրին 40000 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ
6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ
7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 07 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 27 ՈՐՈՇՄԱՆ

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| Հ/Հ | Անուն ,Ազգանուն | Գումար |
|---|---|---|
| 1 | Նարեկ Պարոնյան | 40.000 |
| 2 | Հովհաննես Ալեքսանյան | 40.000 |
| 3 | Էդգար Սարգսյան | 40.000 |
| 4 | Խազալ Քալաշյան | 40.000 |
| 5 | Խաչիկ Հովհաննիսյան | 40.000 |
| 6 | Արարատ Կարապետյան | 40.000 |
| 7 | Աշոտ Բաբերյան | 40.000 |
| 8 | Հրաչ Կիրակոսյան | 40.000 |
| 9 | Ռազմիկ Սարգսյան | 40.000 |
| 10 | Սուրեն Հարությունյան | 40.000 |
| 11 | Հովիկ Հարությունյան | 40.000 |
| 12 | Սարգիս Սարգսյան | 40.000 |
| 13 | Սուրիկ Մնացականյան | 40.000 |
| 14 | Լարիսա Խուդաթյան | 40.000 |
| 15 | Աշոտ Մանուկյան | 40.000 |
| 16 | Հրանտ Ղազարյան | 40.000 |

| | | |
|---|---|---|
| 17 | Կարեն Հարությունյան | 40.000 |
| 18 | Սանամ Թամոյան | 40.000 |
| 19 | Արտուշ Սայադյան | 40.000 |
| 20 | Նորիկ Դավթյան | 40.000 |
| 21 | Սամվել Դավթյան | 40.000 |
| 22 | Շմավոն Դավթյան | 40.000 |
| 23 | Արա Ավդալյան | 40.000 |
| 24 | Վարդան Նադրյան | 40.000 |
| 25 | Աղվան Կոստանյան | 40.000 |

Բամբակաշատի գյուղապետարանի

Աշխատակազմի քարտուղար՝ Ս.Մարտիրոսյան